«ՀՀ Տավուշի մարզի Սևքար համայնքում սառնարանային տնտեսության և թարմ մրգերի ու հատապտղի վերամշակման արտադրամասի հիմնում»

Օքսֆամի Միջազգային Բրիտանական Բարեգործական կազմակերպության Հայաստանի գրասենյակը Ավստրիական զարգացման գործակալության ֆինանսավորմամբ Տավուշի մարզի Սևքար համայնքում իրականացնում է «ՀՀ Տավուշի մարզում փոքր ֆերմերների բարելավումը գյուղատնտեսական կոոպերատիվների և արժեշղթայի զարգացման միջոցով» ծրագիրը, որի համաձայն նախատեսված է Սևքար համայնքի դպրոցի տարածքում գտնվող շենքը վերակառուցել և հիմնել վերամշակման արտադրամաս:

Արտադրամասը հնարավորություն կտա կազմակերպել թարմ մրգերի և հատապտղի վերամշակում, եկամուտ ստեղծել համայնքի և շրջակա գյուղերի 500 կարիքավոր բնակիչների, հատկապես կանանց և «Դարպաս» կոոպերատիվի անդամների համար:

Կստեղծվեն աշխատատեղեր, կկազմակերպվեն մասնագիտական, շուկայավարման դասընթացներ: Ծրագիրը նպատակ ունի աջակցել ֆերմերների, այդ թվում նաև 300 կին ֆերմերների, աջակցելով նրանց կողմից աճեցրած բերքի ամբողջական իրացմանը՝ տրամադրելով կայուն իրացման շուկա, կենսունակ եկամուտ և բարելավելու կարիքավոր բնակիչների կենսապայմանները:

2-րդ արդյունք: Նոր ենթակառուցվածքների (սառնարանային տնտեսություն, վերամշակման արտադրամաս) հիմնում՝ գյուղական համայնքում բիզնեսի զարգացման և ռեսուրսների ստեղծման հնարավորությունների միջոցով, համայնքների սոցիալ-տնտեսական կարիքների բավարարում:
Նոր ենթակառուցվածքը կլրացնի և կխթանի կոոպերատիվների նորմալ գործունեությունը, կնպաստի արժեշղթայի կենսունակ զարգացմանը:

Ենթաարդյունք 2.2 Սառնարանային տնտեսության հիմնում, որտեղ կկազմակերպվի մոտ 15տ թարմ մրգերի և հատապտղի մթերումը և պահեստավորումը: Այն կօգնի ոչ միայն Սևքարի, այլ նաև շրջակա մյուս համայնքների կոոպերատիվներին օգտվելու սառնարանային տնտեսության ծառայությունից:
Ենթաարդյունք 2.3 Վերամշակման արտադրամասի՝ որպես գյուղական բիզնեսի ձեռնարկության հիմնում:
Բանակցություններ կանցկացվեն մասնավոր սեկտորի պոտենցիալ գործընկերների հետ ծրագրի իրականացման ուսումնասիրությանը զուգընթաց որպեսզի հաստատվի աղքատության հաղթահարման ամենաշահավետ և կեսունակ մոտեցում՝ կապելով տեղական մրգի արտադրությունը շուկայի հետ:

Ծրագրի բյուջեով Սևքար համայնքում ՕՔՍՖԱՄ-ի ներդրումները հետևյալն են՝

Նոր վերամշակման արտադրամասի հիմնադրման համար	35,000,000 ՀՀ դրամ
Նոր սառնարանային պահեստ/հավաքման կետի հիմնադրման համար	14,000,000 ՀՀ դրամ

Գործողությունների ժամանակացույց

Սեվքար համայնքում Վերամշակման արտադրամասի հիմնում 2013-2014												
Տեխնիկական և կառավարման խորհրդատվություն Սեվքար համայնքի «Դարպաս» կոոպերատիվին	նոյ	դեկ	հուն	փետ	մարտ	ապրիլ	մայ	հուն	հուլ	օգոս	սեպ	հոկ
Նախքան Վերամշակման արտադրամասի հիմնումը և դրանից հետո Սեվքար համայնքի «Դարպաս» կոոպերատիվի կարողությունների զարգացում և խորհրդատվության տրամադրում՝ իրավական, կառավարչական, կազմակերպչական հարցերում աջակցման նպատակով	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x
Սեվքար համայնքի «Դարպաս» կոոպերատիվի վերամշակման արտադրամասի գործարկման համար տնօրենի, հաշվապահի, տեխնոլոգի կարողությունների զարգացում					x	x	x	x	x	x	x	
Կոոպերատիվի անդամներին աջակցություն՝ ուսուցումների կազմակերպում ծրագրի իրականացման ընթացքում							x	x				

	Առաջին տարի /եռամսյակներ				Երկրորդ տարի /եռամսյակներ			
Գործողություններ	1	2	3	4	1	2	3	4
Արդյունք 2:								
2.2 Սառնարանային տնտեսության հիմնում								
2.3 Վերամշակման արտադրամասի հիմնում								

Նախատեսվում է, որ վերամշակման արտադրամասը կունենա օրական մոտ 300կգ պտղի և մրգերի վերամշակման կարողություն, որը հիմնված կլինի Սևքարի և շրջակա գյուղերից փոքր ֆերմերների կողմից արտադրված մրգերի և շրջակա անտառներից աղքատ կանանց կողմից հավաքած հատապտուղների հումքի վրա: Ծրագրով նախատեսվում է հատուկ ուսուցում կազմակերպել անտառից պտուղներ հավաքողների համար՝ անտառային ռեսուրսների ճիշտ օգտագործման նպատակով:

Հիմնադրումից հետո առաջին տարվա ընթացքում ակնկալվում է, որ վերամշակման արտադրամասը կաշխատի 10%, երկրորդ տարվա ընթացքում՝ 50% և երրորդ տարում՝ 100% հզորությամբ:

Կոոպերատիվը պատասխանատու է արտադրամասի գործունեության և կառավարման համար, խորհուրդը կորոշի ինչպես օգտագործել արտադրամասի եկամուտները՝ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման, մշակութային և կրթական խնդիրների լուծման նպատակով:

Ծրագրի իրականացման ընթացքում "Դարպաս" կոոպերատիվը ամեն եռամսյակ կներկայացնի հաշվետվություն առաջընթացի և ձեռքբերումների վերաբերյալ:

ՕՔՍՖԱՄ-ի հայաստանյան գրասենյակի

Գյուղատնտեսական ծրագրերի կառավարիչ՝

Վադիմ Ուզունյան